UNIBANK

2021

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

UNIBANK

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ բանկային համակարգը 02
- 2019 թվականի կարեվորագույն իրադարձությունները 06
- Հիմնական ֆինանսական ցուցանիշները 09
- Վարկային պորտֆել 12
- Ավանդային պորտֆել 14
- Մանրածախ բիզնես 16
- Կորպորատիվ բիզնես 18
- Կադրային քաղաքականություն 20
- Կորպորատիվ կառավարում 22
- Համապատասխանության ապահովման գործառույթ 25
- Յունիբանկի առաջնահերթությունները 26
- Բանկի առաքելությունը և արժեքները 26
- Զարգացման ռազմավարական հիմնական ուղղությունները ... 28
- Մեր թիմը 31
- Միջազգային վարկանիշ 34
- Կոնտակտային տեղեկատվություն 35

01

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանյան բանկային համակարգի համախառն ակտիվները 2019թ.-ին կազմել են 5,805 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 18.2%-ով:
Բանկերի ակտիվների աճի տեմպերն արտացոլում են վարկավորման ծավալների աճը: Համակարգի վարկային ներդրումների ընդհանուր ծավալը 2017թ.-ի արդյունքներով կազմել է ավելի քան 3,576 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 16.8%-ով 2018թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ:

Բանկերի պարտավորությունները հաշվետու տարում աճել են 19.1%-ով կազմելով 4,960 մլրդ ՀՀ դրամ: Համախառն ավանդների ծավալը 2019թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,442 մլրդ ՀՀ դրամ, ինչը 20.6%-ով կամ 249 մլրդ դրամով ավելի է 2018թ.-ի դեկտեմբերի ցուցանիշից:

ՀՀ բանկային համակարգի շահույթը 2019թ.-ին կազմել է 78 մլրդ ՀՀ դրամ: Հաշվետու տարում տնտեսական աճը Հայաստանում կազմել է 7.6%, ՀՆԱ-ն՝ 6,569 մլրդ ՀՀ դրամ կամ 13,7 մլրդ ԱՄՆ դոլար: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 2 ,219.5 հազ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 2 ,029.3 հազ ՀՀ դրամի դիմաց:

ԱՃԻ ՄԻՏՈՒՄԸ

/2010-2019թթ./

ԱԿՏԻՎՆԵՐ

372%

ԿԱՊԻՏԱԼ

257%

ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

377%

UNIBANK ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019



2019 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բանկն ընդլայնել է իր ներկայության աշխարհագրությունը և բացել է հինգ նոր մասնաճյուղեր՝ Գուգարք, Արարատ, Իսակով, Նորագավիթ, Գևորգ Չաուշ: Տարեվերջի դրությամբ Յունիբանկի մասնաճյուղային ցանցն ընդգրկել է 51 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրացի հաճախորդների ներգրավմանը: Մեկնարկել են Աստանա Միջազգային Ֆինանսական Կենտրոնի հարթակում մասնաճյուղի բացման աշխատանքները՝ որպես օտարերկրյա ներդրումների ներգրավման նոր հնարավորությունների ուղի:

- Բանկի ներդրումային քաղաքականության նկատմամբ նոր մոտեցման իրագործման նպատակով ստորագրվել է Մոսկվայի բորսայում Յունիբանկի արժեթղթերի շրջանառության վերաբերյալ պայմանագիր:

- Կանոնդրական կապիտալն ավելացնելու և Ներդրումային պորտֆելի պրոֆիլը մեծացնելու նպատակով Բանկը որոշել է 2020 թվականի սեպտեմբերին թողարկել 4,778,261 /չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ/ հատ Բ դասի լրացուցիչ փոխարկվող արտոնյալ բաժնետոմս 27% հաստատագրված տարեկան շահութաբաժնով, յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով՝ բաց բաժանորդագրության միջոցով տեղաբաշխմամբ:

- Նախորդ տարի Յունիբանկը նախաձեռնել և ընթացիկ տարվա մայիսին հաջողությամբ ներդրել է արհեստական բանականության տեխնոլոգիան՝ թարմացնելով անգրավ սպառողական վարկերի գծով վարկային սքորինգը: Նորարարական ալգորիթմն օգնում է էապես կրճատել ծախսերը, մշակել մեծ ծավալի տեղեկատվություն, վերլուծել և մոդելավորել հաճախորդի պրոֆիլը՝ դրանով իսկ նպաստելով զանգվածային վարկավորման աճին:

- 2019 թվականը Բանկի համար տրանզակցիոն բիզնեսի զարգացման տարի էր: Հաճախորդների արտաքին տնտեսական գործունեության զարգացմանն օժանդակելու նպատակով թղթակցային հարաբերություններ են հաստատվել արտասահմանյան մի շարք բանկերի, այդ թվում՝ Landesbank Baden-ի (Գերմանիա), Banca Popolare di Sondrio-ի (Իտալիա), Եվրասիական զարգացման բանկի (Ղազախստան), Տրանսկապիտալբանկի (Ռուսաստան) հետ:

- Յունիբանկի բջջային հավելվածի արդիականացման ուղղությամբ տարվող մշտական աշխատանքն էապես ավելացրել է օգտատերերի թիվը, 2019թ-ին տվյալ ծառայության լսարանն աճել է 8108-ով և արդեն գերազանցում է 11.700 օգտատերը: 2018թ-ի համեմատ սպասարկման թվային հարթակի օգտատերերի թիվն ավելացել է գրեթե 20 անգամ:

- Յունիբանկը դարձել է Visa միջազգային վճարային համակարգի մրցանակի հաղթող «Largest Visa Issuance in Armenia» անվանակարգում՝ Հայաստանում Visa քարտերի թողարկման թվով առաջատար դիրքի համար:

UNIBANK ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019

- 2019թ. հուլիսին Moody's Investors Service միջազգային վարկանշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկանիշը B2 մակարդակում՝ կայուն հեռանկարով:

- Շարունակելով ներդրումներն առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաներում՝ Յունիբանկը հաջողությամբ անցել է PCI DSS ստանդարտի պահանջների համապատասխանության ամենամյա հավաստագրային աուդիտը և ISO 27001:2013 ստանդարտի համապատասխանության վերահավաստագրումը՝ հերթական անգամ հաստատելով իր հաճախորդների անձնական տվյալների պաշտպանվածության բարձր մակարդակը:

2019 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՆԿԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԱԿՏԻՎՆԵՐ
249
մլն ՀՀ դրամ

ՎԱՐԿԵՐ
141.4
մլն ՀՀ դրամ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
215.2
մլն ՀՀ դրամ

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ
9.5
մլն ՀՀ դրամ

ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ
10.1
մլն ՀՀ դրամ

ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ
1.7
մլն ՀՀ դրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ
33.8
մլն ՀՀ դրամ

ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ
1.3
մլն ՀՀ դրամ

2019 թվականի արդյունքներով Յունիբանկն ապահովել է հետևյալ ցուցանիշները

Յունիբանկ ԲԲԸ-ի պարտավորությունները (մլն ՀՀ դրամ)



Յունիբանկ ԲԲԸ-ի ակտիվները (մլն ՀՀ դրամ)



Յունիբանկ ԲԲԸ-ի կապիտալը (մլն ՀՀ դրամ)



ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Բանկի ընդհանուր վարկային ներդրումներն առ 31.12.2019թ. կազմել են ընդհանուր ակտիվների 57%-ը: Դրամային վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 56%-ը: Վարկավորման միջին տոկոսադրույքը կազմել է տարեկան 9.9%:

Բարելավվել է իրավիճակը ժամկետանց պարտավորությունների մասով, չաշխատող վարկերի մակարդակը 39%-ից նվազել է մինչև 24%-ի, տարվա ընթացքում իրականացված հետևյալ միջոցառումների արդյունքում՝ բիզնես գործընթացների ավտոմատացում, սքորինգային համակարգերի բարելավում, վերակառուցում, հետբերման աշխատանքների ակտիվացում, ՓՄՁ վարկավորման կենտրոնի և Անդերրայթինգի ուժեղացում, վարկավորման շուկայի սեգմենտավորում:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- ՀՀ դրամ
- Ազատ փոխարկելի արժույթ
- Ոչ փոխարկելի արժույթ



ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- Մանրածախ վարկեր
- Բիզնես վարկեր

ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Ժամկետային ավանդների պորտֆելը հաշվետու տարվա վերջում կազմել է 108.2 մլրդ դրամ: Վերջինիս կառուցվածքում գերակշռում են բնակչությունից ներգրավված միջոցները՝ 96.2 մլրդ դրամ կամ պորտֆելի 89%-ը:

Ցպահանջ ավանդները 2019թ. ընթացքում ավելացել են 38.3 մլրդ դրամով & կազմել են 68.7 մլրդ դրամ, որից 12.8 մլրդ դրամը՝ բաժին է ընկել իրավաբանական անձանց:

Ընդհանուր պարտավորությունների ֆոնդավորման արժեքը նվազել է 0.15%-ով:

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
- Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ
- Փոփոխություններ
- Թողարկված պարտքային արժեթղթեր
- Այլ պարտավորություններ



ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

- Ֆիզիկակն անձիք
- Իրավաբանական անձիք



ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

2019 թվականին Յունիբանկը ֆիզիկական անձանց տրամադրել է 70.8 մլրդ դրամ գումարի վարկեր, սպառողական վարկավորման ծավալն ապահովված է այդ թվում հարմարավետ գործիքակազմի մշակման և տոկոսադրույքների նվազման հաշվին: Մեծ պահանջարկ են շարունակել ունենալ անգրավ սպառողական վարկերը և ոսկու գրավով վարկերը:
Ապառիկ վարկերի թվով Յունիբանկը 2019 թվականի 4-րդ եռամսյակում առաջատար դիրք է զբաղեցրել Հայաստանի բանկային համակարգում: Մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2019թ. ընթացքում նվազել է 0.9 տոկոսային կետով և կազմել է տարեկան 11.4%:
Ֆիզիկական անձանց Ժամկետային ավանդների պորտֆելը տարեսկզբից աճել է 8.5 մլրդ դրամով կամ մոտ 10%-ով: Բանկի թողարկած պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքում տեսակարար կշռի 80%-ը բաժին է ընկնում ֆիզիկական անձանց պարտատոմսերին, ինչը վկայում է բնակչության բարձր վստահության և երկարաժամկետ ներդրման գործիքում սեփական խնայողությունները տեղաբաշխելու պատրաստակամության մասին:

2019թ. վերջի դրությամբ ակտիվ մանրածախ հաճախորդների քանակը գերազանցել է 344.000-ը:

Հաշվետու տարում Յունիբանկի կողմից տրամադրվել է 2.6 մլրդ դրամի թվով 121 հիփոթեքային վարկ, որից 146 մլն դրամի թվով 12 վարկ տրամադրվել է §Ազգային հիփոթեքային ընկերության: «Բնակարան երիտասարդներին» ծրագրի շրջանակներում:

Սպառողական վարկերի գծով օնլայն հայտերի քանակը տարվա ընթացքում կազմել է 35.800 հատ՝ 18.2 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որից հաստատվել է թվով 7,900 վարկ՝ 3 մլրդ դրամ ընդհանուր գումարով:

2017թ. մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը կազմել է 11.38%, նվազելով 0.9 տոկոսային կետով, տոկոսային եկամուտները կազմել են 9.2 մլրդ դրամ (Բանկի տոկոսային եկամուտների 52.4%-ը):

UNIBANK ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019

Մանրածախ վարկավորման բարձր ցուցանիշները 2019 թվականին ապահովվել են հետևյալ միջոցառումների շնորհիվ.

- POS վարկավորման գծով բանկը համագործակցել է ավելի քան 300 կազմակերպությունների հետ, որոնց հետ համագործակցության շրջանակներում Բանկն իր ծառայությունները ներկայացնում է ավելի քան 7000 վաճառասրահներում:
- Ընդլայնվել է պրոմո-կետերի ցանցը՝ հասնելով մինչև 93-ի, որոնց միջոցով տրամադրվել է 13 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի 76,000 հատ վարկ:
- Ավելացել է ոսկու գրավով վարկեր տրամադրող մասնաճյուղերի քանակը՝ 18-ից հասնելով մինչև 31-ի ակտիվորեն գովազդվել է վարկային օնլայն հայտերի, այդ թվում POS վարկավորման ընդունման հնարավորությունը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

Փոքր և միկրո բիզնեսի վարկավորումը շարունակել է մնալ Յունիբանկի զարգացման գերակա ուղղություն կորպորատիվ սեգմենտում՝ պոտենցիալ նիշաների ընտրության նկատմամբ ճյուղային մոտեցման կիրառմամբ: 2019 թվականի ընթացքում փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրված վարկերի պորտֆելը քանակական արտահայտմամբ աճել է 24%-ով և կազմել ավելի քան 27 մլրդ դրամ:Յունիբանկի ընտրության պարագայում վարկավորման պայմաններից բացի կարևորագույն գործոն է հանդիսանում ճկուն մոտեցումը, հաճախորդի բիզնեսի առանձնահատկությունների ընկալումը և վարկի վերաբերյալ որոշումների կայացման արագությունը: «Պրոտոբեյզ Լաբորաթորիզ» ընկերության նորագույն CRM-համակարգն ապահովել է անգրավ բիզնես վարկավորման ֆլագմանյան գործիքի բարձր պահանջարկը՝ 1.4 մլրդ դրամ գումարի տրամադրումների ծավալով, ինչը 30%-ով գերազանցում է 2018թ. ցուցանիշը: «Էքսպրես»՝ մեծ պահանջարկ ունեցող գործիքի պորտֆելը արձանագրել է ծավալի ավելի քան 5 մլրդ դրամի ռեկորդային աճ:

Կորպորատիվ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2019թ-ին, շուկայի դինամիկային համահունչ, նվազել է 1.7 տոկոսային կետով և կազմել է տարեկան 9.6%: Կորպորատիվ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2019թ-ին նվազել է 1.1 տոկոսային կետով և կազմել է տարեկան 12.3%, տոկոսային եկամուտը կազմել է 5.4 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր տոկոսային եկամուտների 24%-ը)

Տարվա ընթացքում Բանկը շարունակել է աշխատանքը ֆինանսավորման ծրագրերով՝ KfW Գերմանական զարգացման բանկի հետ՝ արևային էլեկտրակայանների ձեռքբերման, FMO Հոլանդական զարգացման բանկի հետ՝ Հայաստանում կանանց ձեռնարկատիրության աջակցման, Եվրոպական ներդրումային բանկի հետ՝ ագրոհատվածի և ՓՄՁ զբոսաշրջության վարկավորման ոլորտներում:
Էական աճ է դիտվել իրավաբանական անձանց ցպահանջ միջոցների պորտֆելի գծով՝ 37.1 մլրդ դրամով, պորտֆելը կազմել է 68.7 մլրդ դրամ:

Ակտիվ կորպորատիվ հաճախորդների քանակը հասել է 3108-ի, հիմնականում փոքր բիզնեսի ձեռնարկությունների հաշվին:

UNIBANK ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019

ՓՄՁ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՌԵՎՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Black Sea Trade & Development Bank

IFC International Finance Corporation WORLD BANK GROUP

kfw

European Investment Bank The EU bank

FMO Entrepreneurial Development Bank

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի կադրային քաղաքականությունն ուղղված է արդյունավետ և բարձր որակավորում ունեցող կադրային ներուժի ձևավորմանը, անձնակազմի ուսուցման համակարգի զարգացմանը, աշխատա-կիցների համար մոտիվացիոն համակարգի բարե-լավմանը, ինչպես նաև կորպորատիվ մշակույթի նորմերի պահպանմանը, որը ենթադրում է գործարար հաղորդակցության և սպասարկման ստանդարտների պահպանում:
Կադրային քաղաքականությունն ուղղված է անձնակազմի մանրակրկիտ ընտրությանն ու ուսուցմանը, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող կադրերի ձևավորմանը, որի շնորհիվ հնարավոր է ապահովել ծրագրված արդյունքները: Տվյալ քաղաքականությունն իրականացվում է բանկի կորպորատիվ շահերի շրջանակներում՝ առավել փորձառու մասնագետների ներգրավման, նախաձեռնող աշխատակիցների խրախուսման և առաջ-խաղացման միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվում պրոֆեսիոնալ մակարդակի աճին և օպտիմալ վարչակազմակերպչական կառուցվածքի ձևավորմանը:

Ընտրության, թեստավորման և հարցազրույցների ընթացքում առանձնացվում են պատասխանատու, առաջադեմ և նպատակասլաց մասնագետներ, որոնք կիսում են բանկի արժեքները և պատրաստ են դրանք զարգացնել: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և որակավորման մակարդակի որոշման համար բանկը պարբերաբար անցկացնում է անձնակազմի ատեստավորում և ռոտացիաներ:

2019 թվականի աշխատանքի հիմնական ուղղություններն են՝

- բիզնես ստորաբաժանումների արդյունա-վետության բարձրացման նպատակով բանկի վարչակազմակերպական կառուցվածքի փոփո-խությունը,
- համակարգված ուսուցման զարգացում ու աշխատակիցների որակավորման բարձրացումը,
- վերապատրաստման ծրագրերի իրականացում և Հայաստանի առաջադեմ ԲՈՒՀ-երից ուսա-նողների ներգրավումը:

2019թ-ին բանկի անձնակազմի թվաքանակը կազմել է 840:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կորպորատիվ կառավարման համակարգի ընդհանուր նկարագիրը

Բանկում գործում է լիարժեք կորպորատիվ կառավարման կառուցվածք, որը ներառում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը, Ներքին աուդիտը, Խորհրդին կից Հանձնաժողովները, Վարչությանը կից Հանձնաժողովները, Վարկային կոմիտեն և Պահուստների կառավարման Կոմիտեն: Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի գործունեության հիմնական հարցերի վերաբերյալ: Բաժնետերերի ընդհանուր ժողովն անց է կացվում ամեն տարի: Խորհրդի որոշմամբ նաև կարող է գումարվել արտահերթ ժողով: Բաժնետերերի ընդհանուր ժողովի ամսաթիվը սահմանում է Խորհուրդը: Բանկը տեղեկացնում է բաժնետերերին Ընդհանուր ժողովի անցկացման մասին՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելով հաղորդագրություն ոչ ուշ, քան 15 օր առաջ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից և 30 օր առաջ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները նույն կարգով տեղեկացվում են բաժնետերերին:

Բանկի Խորհուրդը հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, որը սահմանում է Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև՝ ներքին վերահսկողության կազմա-կերպման մոտեցումները: Բանկի Խորհուրդը, իրականացնելով իր գործունեությունը, հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, գործում է Բանկի և բաժնետերերի շահերի համաձայն, ինչպես նաև ապահովում է բոլոր այլ շահագրգիռ անձանց շահերը և օրինական պահանջները: Բանկի Վարչությունն իրականացնում է ընթացիկ, օպերացիոն գործունեության ղեկավարումը լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ: Վարչությունը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին և Բանկի Խորհրդին: Ներքին աուդիտն ունի անկախ կարգավիճակ, գործում է Խորհրդի անմիջական հսկողության ներքո: Իրականացնում է Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության ստուգում և գնահատում:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Այստեղ Բանկի 2019թ. քաղաքականությունն ուղղված է եղել ապահովելու բանկի գործունեության խիստ համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը: Այդ նպատակով իրականացվել է Բանկի ներիքն իրավական ակտերի, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների և գործիքների բազմակողմանի վերլուծություն, օրենսդրական փոփոխությունների նախագծերի ուսումնասիրություն, ինչպես նաև Բանկի կառուցվածքային ու տարածքային ստորաբաժանումների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում:

Դեպարտամենտի գործունեության հատուկ ուշադրության կենտրոնում է հաճախորդների բողոքների և առաջարկությունների վերլուծությունը, որը նպատակ է հետապնդում բարելավելու հաճախորդների սպասարկման որակը և բացառելու նմանատիպ բողոքների կրկնությունը հետագայում: Դեպարտամենտի գործունեության որակի մասին են խոսում ներքոնշյալ թվերը՝ 2019թ. ընթացքում գրանցվել է 661 բողոք, որոնցից Բանկն ամբողջովին կամ մասնակիորեն բավարարել է միայն 110 (ընդհանուր թվի 16.6 տոկոսը): Վերոնշյալ բողոքների արդյունքնրով Բանկի կողմից իրականացված վճարումների ընդհանուր գումարը կազմել է 2,15 միլիոն ՀՀ դրամ:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է հետևել շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին: Վարկավորման ծրագրերի իրականացման ժամանակ բանկը հաշվի է առնում շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների համապատասխանության փաստը և նախապատվություն է տալիս էկոլոգիապես մաքուր ապրանքների արտադրությանն ու ռեսուրսախնայող գործունեություն իրականացնող ծրագրերի վարկավորմանը: Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է նվազագույնի հասցնել այն նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա:

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յունիբանկը դինամիկ զարգացող ինովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև՝ որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն
- հասարակության վստահություն
- ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- հուսալիություն և կայունություն

UNIBANK ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019

ՄԵՆՔ ՁԳՏՈՒՄ ԵՆՔ

- ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը
- բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- բարձրացնել բանկի ներդրումային գրավչություն

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020թ. ռազմավարական առաջնահերթությունները

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում, ինչպես նաև վերջին ամիսների իրադարձությունները հանգեցրել են Բանկի հետագա զարգացման խնդիրներն ու առաջնահերթությունները, և Բանկի ղեկավարությունը վերանայում է տարեկան կանխատեսումները՝ վերլուծելով Յունիբանկի զարգացման տարբեր սցենարներ:

Քաղաքացիների և բիզնեսի օժանդակությանը միտված քայլերի շրջանակում Յունիբանկը մասնակցում է կառավարության՝ փոքր և միջին բիզնեսի խթանման, սոցիալական աջակցության նպաստների վճարման ծրագրերին, վարկերի գծով մարումների հետաձգման հնարավորության տրամադրմանը, վարկերի վերակառուցման հնարավորությանը, հաճախորդների հետ անմիջական շփումն առավելագույնս սահմանափակելու նպատակով ներդրվել է մոբայլ բանկինգի համակարգին հեռավար միացման հնարավորություն:

Յունիբանկի կողմից հաստատված ռազմավարության շրջանակներում սահմանվել են 2020թ. զարգազման հետևյալ առանցքային առաջնահերթությունները՝

- Տեխնոլոգիական կատարելագործում, թվային հարթակի վաճառքի զարգացում,
- Վարկավորման բնագավառում արհեստական բանականության տեխնոլոգիաների հետագա զարգացում,
- Հաճախորդահեն մոտեցման զարգացում և հաճախորդների պահանջմունքների խորը վերլուծության հիման վրա՝ սպասարկման և գործիքակազմի ձևավորում նաև նրանց կոնտրագենտների համար
- Յունիբանկի ֆինանսական արդյունավետության և դիրքերի բարելավման ապահովում բանկային համակարգում, Բանկի ներդրումային գրավչության բարձրացում:

ՄԵՐ ԹԻՄԸ

Բանկի Խորհուրդը

ԳԱԳԻԿ ՋԱՔԱՐՅԱՆ
Խորհրդի նախագահ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի նախագահ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, Ռուսաստանի բանկերի միության խորհրդի անդամ, “Национальный Банковский Журнал” ամսագրի դիտող խորհրդի անդամ: Գագիկ Ջաքարյանը տարբեր տարիներին արժանացել է ֆինանսական աշխարհի մի շարք առաջատար մրցանակների, պարգևատրվել է տարբեր շքանշաններով և մեդալներով հայրենիքին մատուցած ծառայությունների համար:

ԳԵՈՐԳԻ ՊԻՍԿՈՎ
Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի անդամ, «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ՍՊԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, Ֆինանսական պլանավորման ինստիտուտի հիմնադիր և նախագահ: Իրականացրել է մի շարք հաջող ծրագրեր Ռուսաստանում և Մեծ Բրիտանիայում:

ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ
Խորհրդի անդամ

«Յունիլիզինգ» ընկերության բաժնետեր և Խորհրդի նախագահ, «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի աշխատանքային մեծ փորձ ՀՀ բանկային համակարգում:

ՀՐԱՀԱՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Խորհրդի անդամ

«Տրանսստրոյբանկ»-ի Տնօրենների Խորհրդի նախագահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի աշխատանքային մեծ փորձ ՌԴ բանկային համակարգում:

ԷԴՈՒԱՐԴ ՋԱՄԱՆՅԱՆ
Խորհրդի անդամ

«Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների Խորհրդի անդամ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ մի շարք խոշոր ֆինանսական հաստատություններում:

ԱՐՏԵՄ ԿՈՆՍՏԱՆԴՅԱՆ
Խորհրդի անդամ

Ունի աշխատանքային մեծ փորձ ՌԴ բանկային համակարգում:

ԴԱՎԻԹ ՓԱՓԱԶՅԱՆ
Խորհրդի անդամ

«Հայաստանի Հանրապետության ազգային շահերի պետական հիմնադրամ», գլխավոր տնօրեն

Բանկի Վարչությունը

ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ
Վարչության նախագահ

Աշխատում է Յունիբանկում 2004թ.-ից, ունի ավելի քան 18 տարի աշխատանքային փորձ ՀՀ բանկային համակարգում:

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վարչության անդամ

Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ , «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ: Բանկային համակարգում աշխատանքային փորձ՝ ավելի քան 21 տարի, ACCA անդամ, MBA:

ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության նախագահ
առաջին տեղակալ

Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ Հայաստանի, Ուկրաինայի և Մալթայի մի շարք խոշոր բանկերում:

ԳՈՒՐԳԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության անդամ

Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն:
Մասնակցել է որակավորման բարձրացման մի շարք ծրագրերի, այդ թվում՝ USAID-ի և KfW բանկի:

UNIBANK ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019

ՕՀՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Վարչության անդամ

Վարչության նախագահի տեղակալ - Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն, «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի և «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ, ՀՀ բանկերի միությանը կից Ֆինանսական արբիտրաժի արբիտր:

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Վարչության անդամ

Կորպորատիվ բիզնեսի զարգացման և Տնտեսագիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանային փորձն ավելի քան 16 տարի:

ԱՐԹՈՒՐ ԱՊԵՐՅԱՆ
Վարչության անդամ

Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն, Աշխատում է Յունիբանկում 2008թ.-ից: Բանկային համակարգում աշխատանային փորձն ավելի քան 12 տարի:

ՀԱՅԿ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Ներքին Աուդիտի ղեկավար
Բանկային համակարգում աշխատանային փորձն ավելի քան 16 տարի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ

Moody-s Investors Service միջազգային գործակալությունը բարձրացրել է Յունիբանկի վարկանիշը՝ սահմանելով B2 դրամով & արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար: Բազային վարկային գնահատականը /baseline credit assessment (BCA)/ սահմանվել է b3, իսկ կոնտրագենտի ռիսկի գնահատականը /longterm Counterparty Risk Assessment (CR As-sessment)/՝ B2(cr)/NP(cr) մակարդակի վրա: Կանխատեսումը՝ կայուն:

ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

- BANKA POPOLARE DI SONDRIO
- EURASIAN DEVELOPMNET BANK
- CB UNISTREAM
- ALFA BANK
- BANK OF GEORGIA
- RAIFFEISEN BANK INTERNATIONAL AG
- AO RAIFFEISENBANK
- TRANSSTROIBANK
- TRANSKAPITALBANK
- EXIMBANK OF RUSSIA
- JSC ROSSELKHOZBANK

UNIBANK ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվություն հաճախորդների համար
+ 374 10 59 55 55
callcenter@unibank.am

Տեղեկատվություն բաժնետերերի համար
Ներդրողների և միջազգային կազմակերպությունների հետ
հարաբերությունների զարգացման վարչություն
+374 10 59 22 59
ir@unibank.am
margarita.hambardzumyan@unibank.am

Բանկի աշխատակազմ
+374 10 59 22 59
anna.badoyan@unibank.am

Տեղեկատվություն ԶԼՄ-ների համար
Հասարակայնության հետ կապերի ծառայություն
+374 10 55 56 86
lusine.khachatryan@unibank.am

Բանկի գլխամասային գրասենյակի հասցե՝ 0025,
ՀՀ, Երևան, Չարենցի 12, N53, 1-5
+374 10 59 22 59, +374 10 59 55 55,

www.unibank.am | corp.unibank.am | prive.unibank.am

ՅՈՒՆԻԲԱՆԿ|PRIVÉ
595555
prive.unibank.am
UNIBANK|PRIVÉ
ЮНИБАНК|PRIVÉ
www.unibank.am | prive.unibank.am